# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  N 13-Ա**

<<14>> փետրվարի 2025 թվական                    քաղաք Մարալիկ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 162-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 34-րդ հոդվածի 1-3-րդ մասերի դրույթներով.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին**

**որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի առաջարկությամբ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 9 հավելվածում /<<Անի կոմունալ տնտեսություն>> համայնքային բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) որոշման հավելվածի <<ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏ>> բաժնի 23-րդ կետից հետո ավելացնել նոր՝ 24-րդ կետ, հետևյալ խմբագրությամբ՝

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 24 | Համայնքի ներքին ենթագոտու բնակավայրերի ջրատնտեսական համակարգերի սպասարկման պատասխանատու | 1 | 200 000 | 1 | 200 000 |

բ) Նույն բաժնի «Ընդամենը» տողի 3-րդ սյունակում նշված «20» թիվը փոխարինել «21» թվով, 4-րդ սյունակում նշված <<530000>> թիվը փոխարինել <<730000>>, իսկ 6-րդ սյունակում նշված «2647500» թիվը փոխարինել «2 847500» թվով:

գ) Որոշման հավելվածի վերջին <<ԸՆԴԱՄԵՆԸ>> տողի 3-րդ սյունակում նշված <<117>> թիվը փոխարինել <<118>> թվով, 4-րդ սյունակում նշված <<8690000>> թիվը փոխարինել <<8890000>> թվով, իսկ 6-րդ սյունակում նշված «17210000» թիվը փոխարինել «17410000» թվով:

դ) Որոշման հավելվածի 1-ին սյունակի 24-րդ կետից հետո հերթական համարակալումը նշել ըստ հերթականության՝ 25-ից 50 թվերով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 17-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի համայնքային ենթակայությամբ բյուջետային հիմնարկների և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2025 թվականի կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N 162-Ա որոշման N 1 հավելվածում <<Մարալիկի մշակութային երիտասարդական կենտրոն>> բյուջետային հիմնարկ/ կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Որոշման հավելվածի 17-րդ կետից հետո ավելացնել նոր <<18>>-րդ կետ հետրյալ խմբագրությամբ.

| Հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքի քանակը | Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/ | Սահմանված դրույքը | Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 18 | Հավաքարար / Լանջիկի մշակույթի տուն/ | 1 | 104 000 | 0.5 | 52000 |

գ) Վերջին՝ «Ընդամենը» տողի 3-րդ՝ <<Հաստիքի քանակը>> սյունակում նշված «18» թիվը փոխարինել «19» թվով, 4-րդ՝ <<Պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/>> սյունակում նշված «1936000» թիվը փոխարինել «2040000» թվով, 5-րդ <<Սահմանված դրույքաչափը>> սյունակում նշված <<16.5>> թիվը փոխարինել <<17>> թվով, իսկ 6-րդ՝ <<Սահմանված դրույքաչափը /ՀՀ դրամ/>> սյունակում նշված՝ <<1861000>> թիվը փոխարինել <<1913000>> թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ՝11 | դեմ՝0 | ձեռնպահ՝0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ------------ | ------------ | ------------ |

Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ------------ ------------ ------------

Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ ------------ ------------ ------------

Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ ------------ ------------ ------------

Ա. ՇԱԲՈՅԱՆ ------------ ------------ ------------

Հ. ՋԱՏԻԿՅԱՆ ------------ ------------ ------------

Ժ. ԱԼԵՔՅԱՆ ------------ ------------ ------------

Ն. ՍԱՐՈՅԱՆ ------------ ------------ ------------

Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ ------------ ------------ ------------

Մ. ԵՆՈՔՅԱՆ ------------ ------------

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ ------------ ------------ ------------

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ ------------ ------------ ------------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<14>> փետրվարի 2025 թ.
քաղաք Մարալիկ